

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Ուսանողին համարները 5 կողմերով:

Թիֆլիսում գրվում են միմյանից անարտատրաստ մեջ:

Օտարարարարացիք դիմում են ուղղակի  
Tiflisc. Redakcia «Melik»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրատանիսր բառին 2 կողմերով:

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Տաղանդները կորչում են:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Գամախուց: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Պատակաւ ինչորի ծագումը: Վաւերացում Աղարեանի: Միացեալ ընկերութիւնը հայոց: Նամակ Թլերբայից: Արտաքին լուրեր: ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Հրէշաւոր է:

ՏԱՂԱՆԴՆԵՐԸ ԿՈՐՉՈՒՄ ԵՆ

Ինչքան տաղանդներ կան հայոց ազգի մէջ,—ո՞վ է դիտել, քննել ու գնահատել նրանց:

Մի երիտասարդ է յայտնվում, որ տաղանդ ունի դէպի գիտութեան արհեստը, բայց նա աղքատ տղայ է: Ո՞վ է նրան օգնում, ով է նրան ուղարկում գիտութեան դպրոց,—ոչ ոք: Բայց երբ որ այդ տղան դառնում է մի լազարեպ, մի Տէր-Ղուկասով, մի Շէկովիչիով,—մենք թէև ոչինչ չենք արել նրան օգնելու: Համար, քիչով, պարծենում ենք, որ ունենք լազարեպներ, Տէր-Ղուկասովներ, Շէկովիչիովներ:

Մի աղքատ տղայ ձիւր է ցոյց է տալիս դէպի նկարչութիւն: Նրան կամ ոչ ոք մեզանից, մեր հարուստներից չէ օգնում, կամ օգնում են օտարները: Անյայտ, աղքատ տղան դառնում է մի երեւելի նկարիչ, մի Ալվազովսկի,—և ահա մենք ոչինչ չսրած պարծենում ենք, որ ունենք մի Ալվազովսկի...

Մեր հարուստները, ինչպէս նորերումն ասեցինք, տգէտ, անզարգացած, անզարգէտ մարդիկ են, նրանց ի՞նչ փոյթ հայ հասարակութեան մէջ յայտնվող տաղանդներ: Նրանք ոչ պէտք ունեն այդ տաղանդներին նպաստելու, ոչ էլ կարող են նրանց գնահատել, իսկ հասարակութեան մէջ չը կայ

համերաշխութիւն, որ կարողանաք հիմնաւոր ընկերութիւններ կազմել, բարեգործական ընկերութիւններ հիմնել մեր մէջ յայտնվող տաղանդներին ուսում տալու համար:

Եւ ահա այդ տաղանդները կորչում, անհետանում են մեր մէջ ապարդիւն կերպով: Երէկ մեզ աջողվեցաւ լսել կօնցէրտի մէջ մի հայ երիտասարդի, պ. Մոյիսեանի ձայնը: Պարոնի ձայնը մի շատ հազաւորեա տեհորի ձայն է. դա կատարեալ գանձ է, թէև անմշակ, անզարգացած գանձ է: Եթէ պարոնը ուսում առնի, նա կարող է մի ճշմարիտ երեւելի երգիչ դառնալ: Տէրերները անհասարակ հազաւորեա են աշխարհիս երեսին, բայց մանաւանդ այդ տեսակ բարձր, մաքուր, զօրեղ և մետաղական հնչիւնով տէրերներ: Բայց ո՞վ է օգնում նրան որ իր ուսումը շարունակի. ոչ ոք: Նա ինչքան միջոցներ չունի, որ գնայ Ս. Պետերբուրգի կոնսերվատորիա, երաժշտական դպրոցը. նա տալիս է մի կոնցերտ Թիֆլիսում, —և գրեթէ ոչ ոք չէ գալիս, իսկ մեր հարուստները վերադարձնում են նրան իրանց ուղարկած տոմսակը, մի կողմէ էլ չը վճարելով իրանց ստացած տոմսակի համար... Բայց եթէ ժամանակով, որի մէջ մենք կասկած չունենք, նոյն Մոյիսեան երեւելի երգիչ կը դառնայ, նոյն հայերը կը պարծենան, որ կայ մի երեւելի հայ երգիչ, որ օպերաներումն է երգում, թէև իրանք ոչինչ չեն արել նրան օգնելու ուսում աւարտելու համար, ամական մի յիսուն լուրջ էլ չը տուեցին, որ մի չորս հինգ տարի սովորի երաժշտական դպրոցում, իսկ խղճը զուցէ իր կօպէկներով, զուցէ օտարների հաշուով կը սովորի...

Ինչով բացատրել այն անմիթար երեւոյթը որ հայերի մէջ չը կայ ոչինչ հասարակական համերաշխութիւն, որ հայերը պայմանին, այսօրուայ ամուսնութիւնը ցանկաւ չի հետևանքներէ շատ անգամ թափուր է մընում. դեռ մեզ հետ է պարուստ հին սերնդի մեծ միացողը, որ ճակատագրին է հպատակվում և նրանից եկածը հեղուկութեամբ ընդունում: Մի էրբի անհամապատասխան կնկայ, կամ մի կնիկ անհամապատասխան էրկայ է հանդիպել: Այդպէս է հաշտ հոգով ամուսնի. բազմի գիրն է այդ Բայց նոր սերնդի պատանին կամ օրիորդը, որոնք նախապաշարժունքի փոյնի թօթափել են իրանցից, որոնք իրենք են գրում իրենց ճակտին որ և է գիր և, հետևապէս ձգտում են եղծել այդ մի և նոյն գիր, երբ փորձով տեսնում են թէ իրենց ձեռք չէ տալիս, դուքս հպատակուել չը գիտեն: Չը նայելով սրան, հին ընկերութեան սովորութիւններ տակաւին ճշնշում են սրանց ուսերն իրենց երկաթէ լծի տակ: Այդ ճշնշումն հեղուկութեամբ ու հաշտ հոգով չընդունվելով, ծագվում են ընտանիքի մէջ անհերքաչափութիւն, կապոն ու կռիւ, թշուառութիւն:

Այստեղ իմ միւս ընկերս խօսք առնելով ասաց, մի անցք պատմեմ ձեզ, շատ ժամանակ չէ, ճանաչած եմ մի մտտաղ և գեղատեսիլ կին. նորան ամուսնացուցել են ասան և վեց տարեկան հասակում. այսինքն վերառել ու տուել են մի մարդու: Պարոնը սիրում է հարբել ու վառնել: Կնոջ բերած հինգ հարիւր ռուբլին ուսում է, կինը համբերում է: Կարասիք և այլն ինչում են այդ անդունդի մէջ կինը սրտածմիկ մտիկ է անում:

անընդունակ են ընկերութեամբ, ընկերակցութեամբ գործել:

Թիւրքաց և պարսից տիրապետութեան գարեւոր ստրկութեան տակ հայը ընտելացել է այն մտքին, որ ամեն մարդ ետական պէտք է դառնայ, միմյան իր մասին և իր ընտանիքի մասին հոգայ, իր համար իր անդուհում փողեր դիզել, իսկ հասարակութեան հետ նրա կապերը խզվեցան. մեր մէջ այլ ևս չը մնաց ոչինչ հասարակական կապ... Այդ է պատճառը որ հայը չէ ըմբռնում ոչ հասարակութեան, ոչ ազգութեան, ոչ էլ հայրենիքի գաղափարները: Նրանք հաւաքական գաղափարներ են, որոնց կարելի է հասնել հասարակական յաջողեական կրթութեամբ: Հայի համար մատչելի է միայն մի գաղափար. իր անձի և իր ընտանիքի նեղ գաղափարը, քանի որ ընտանիքը նոյնպէս իր համար գոյութիւն ունի: Հայը ապրում է միայն իր փոքի համար, իսկ փողերը դիզում է իր ժառանգների համար: Հայը որպէս իր ժառանգների վրա, նախ և միմիայն իր սեփական, իր կնոջից ծնված երեխաների վրա, բայց նա դեռ չէ հասել այն հասկացողութեանը, որ ամբողջ ազգի զաւակները մեր ժառանգներն են, որ մի ազգի ներկայ սերունդի ժառանգները նոյն ազգի ապագայ սերունդներն են:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Օգոստոսի 2-ին

Ամեն մի առողջաբառ անհատը կարող է պարզ երևակայել որ եկեղեցի, ժողովուրդ, ժողովրդի իրաւունք, ժողովրդի ձայն, ժողովրդի պահանջ, ժողովրդեան ժառանգութիւն, խիղճ, արդարութիւն և ճշմարտութիւն ամենը գտնված է սրբի-

տութիւնից օգուտ զարդ և անխիղճ համարուածների անձնական շահերին և կրթի կամայականութեան: Համարու երկուսու դպրոցները վարուց է որ բարակացաւ ենթակայ և կիսադիակացած անքում են, շատերը սպասում են շուրջ դուրս փչուլուց քելեխի գան: Քաղաքի լուսաւորչական երկու եկեղեցիները ի միասին հազիւ հազ կարող են մի դիւղական եկեղեցի կազմել. հարկաւոր է երևակայել մի քաղաքի երկու եկեղեցիները որոնք ունեն մի տիրացու և տիրացուն էլ շարաթը մի անգամ այդ եկեղեցիները մուտք գործելուն անտես առնի... ուրիշ ինչ հարկաւոր է երկարաբանել:

Համարու վիճակի գիւղական հայերի հոգևոր և մտաւոր պահանջներն էլ յանձնված են միմիայն ինքնամատուցութեամբ: Անցեալ ամսի 25-ին էր որ մեր փողոցում մի քանի գիւղական հայեր յուսահատված և վիրաւորված խօսում էին հետեւալը: Մի որ և իցէ բախտաբանիքը վարդապետի արքանեակ գործակալը, չը նայելով որ նա Ղալաքեա գիւղում տիրում է 100 տուն ծիխ հետ և մի ընդարձակ խաղողի այգու, հազիւ հազ է յաջողում հոկտեմբերի վերջին նորանից ազատվել: Ղալաքեա գիւղից 8 վերստաչափում 100 տուն Ալայիչէն գիւղը, 12 վերստաչափում 120 տուն Ուշուալ գիւղը, և 15 վերստաչափում Գեօկչայի 25 տունը. ահա այդ տարաբախտ գիւղերի հոգևոր օրինակատարութիւնից թշուառացեալ հայ ժողովրդից էին յուսահատ և վիրաւորված գանդատաւորները: որ ի միջի այլոց նրանք ասում էին թէ բոլոր տարուայ ընթացքում իրանք գուրկ և կարօտ են եկեղեցական ժամապարտութեան, և եկեղեցու զանգակի ձայն լսելուն ու եկեղեցի ներս մտնելուն: միայն այնպիսի դէպքերում եկեղեցու դռները բացվում են, երբ իրանց մէջ կը պատահի մի մարտութիւն, մի պըսակ, և կամ մի ննջեցեալ: Պատահած ննջեցեալի դիակն էլ խօ մինչև օրինակատար տէր հօր գրտնելը և նրա կամքը առնելը, անշուշտ գարշահոտ պիտի գերեզման իջեցնել, թէև այդ գիւղերից ամենամօտ հարեան գիւղերում ևս գըտնվում են բացի գործակալ հօրից էլի չորս քահանաներ, ինչպէս է Ուշուալ գիւղից 5 վերստաչափում 50 տուն Ուշուալաչէն գիւղի աղքատ քահանան, հէնց Ղալաքեա իրան մէջ երեք քահանաներ, և Գեօկչայից 6 վերստաչա-

տաղ քրոջս. երբ էլ չը կարողանամ կը յանձնուիմ կուր գետին, վշտերս նորա ալիքների մէջ կը թաղեմ. մարդիկ, ծանօթներ, ինձ մուրացկան, կամ աղախին պէտք չէ տեսնեն: իսկ քոյրըս, եթէ բարի բաղդ ունի, մի ողորմած սիրտ մարդու կը հանդիպի, որ նրան իրեն ամուսին կառնէ և մօրս էլ կը պահէ: իսկ եթէ ոչ, իմ ճանապարհս մէջ կը մտնի նա էլ, և գուցէ ինձ պէս աւարտէ նա էլ:

Երբ ընկերս պրծաւ, միւս երկուսս միաձայն կանչեցինք «հրէշաւոր է»:

Գուցէ ուսումնարաններն աւելի հզօր լինեն. հայ օրիորդական ուսումնարանների համար ծրագիր տուողները թող չը մոռանան աղքատ աղջկայ և տառապեալ կնոջ վիճակը:

Աղջիկը, գրի, հաշուի և ձեռարուեստի հետ, ուսումնարանէն պէտք է տանի իր հետ նաև այս գաղափարը թէ, պատուով մի պատար հաց ճարելու համար, ի հարկին նաև աղանդութիւնը նուստատացնող չէ. և այդ ժամանակ նա կիսով չափ փրկուած կը լինի:

Ա. Մ. Ե. Պ.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԻՔՇԱՌՐ Է

Երեկոյեան ընծին, Ալեքսանդրեան պարտէզի ծառերի տակ, առանձնացած նստած էինք երեք ընկեր: Մէկը մեզանից, որ աւելի գանգաւոր է և հետաքար աւելի ծանծրացած էր թւում: Կնանքն, մաղթում էր շուտ ծերանալ և մտնել իսկ ինձ, որ կենաքէն աւելի գոհ էի, ընտանիքի ծոցում, թէև նիւթական դժուարութեան մէջ, յաւիտեան չը մեռնելն էր բաղձալի, և ասացի: Արդէն վիճարանում էինք, և ընկերս փոխեց խօսքն և ասաց թէ հանգիստ և միթիթարութիւն, տաժանախի աշխատանքէն վերջը, զուցէ ընտանիքի ծոցում կարելի է գտնել. բայց բեր ինձ կին, յաւելցնում էր, որ, իր սիրովն ու չուրքը գրաւել: Գրա համար, ասացի, պէտք է կենակիցներն իրար յարմար լինեն. իրար յարմար լինելու համար, պէտք է իրար ճանաչեն, իրար ճանաչելու համար, պէտք է իրար հետ ազատ յարաբերութեան մէջ լինեն: Առանց այդ

փում 40 տուն Բողազանդ գիւղի աղքատ քահանան: Բայց ասում են զրանց սաստիկ հրամայված է առաջնորդից թէ հրաւիրմամբ և թէ պատահմամբ այդ գիւղերում օրինակատարութիւն չանել և չը վնասել զործակալ հօր շահերին: Միթէ կարելի չէր որ հոգևոր իշխանութիւնը այդ յուսահատված գիւղացիները դառը վիճակը թեթևացնելու և հնչաացնելու համար բաժանէր զրանց յիշեալ 5 քահանաների վրա, կամ թէ գոնէ հենց ամենքը յանձնէր Ղալազեայի երեք քահանաներին, որ իւրաքանչիւրը առանձին առանձին հովիտին և կամ հերթապահութեամբ, և ոչ թէ Ղալազեայի կէսը թողել երկու քահանաներին, իսկ կէսը հետ 8, 12, և 15 վերտում երեք գիւղն էլ իր գործակալին զոհէր, և քաղցած երեխաների հացը ձեռներէր խլելով զգէ մի շահախնդրին:

Յայտնելով այս փաստերը խմբագրիչը, խնայահար խնդրում ենք իրեն ազգային մամուլի ներկայացուցչին, հրաւիրել Էջմիածնի հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը թշուառ Աւստայցոց, Աղայի շինացոց և Գեօկչացոց վրա: Շամախու արդի հոգևորական իշխանութեան կամայականութիւնը բոլորովին հակառակ է վեհափառ Հայրապետից պարզեամբ հրահանգին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 13-ին, Արծրունու թատրոնում մի կօնցերտ ներկայացուցան կար, որին մասնակցեց պ. Մոյսիսեան: Պարտի ձայնը, որ մենք առաջին անգամ ենք լսում, մի կատարեալ գանձ է, թէ անմշակ գանձ: Շատ հազիւ է պատահում լսել տէնորների մօտ ամենաբարձր ձայները այդքան մաքուր, կուրճի ձայնը, ինչպէս պ. Մոյսիսեանի մօտ: Գծադրաբար հասարակութիւն գրեթէ չը կար կատարում: Եթէ պ. Մոյսիսեան ուսում առնի, նա կարող է գաւառալ նշանաւոր երգիչ: Ասում են պարսեր միջոցներ չունի, որ գնաց երաժշտական դպրոց, այնտեղ իր ձայնը կատարելագործելու:

Մեզ պատմում են, որ մի շատ հարուստ թիֆլիսցի հայ, որին պ. Մոյսիսեան մի լոճայի տօմսակ էր ուղարկել իր կօնցերտի համար, վերադարձել է պարտիին իր տոմսակը, առանց փող վճարելու: Ի հարկէ, ինչ կարելի է պահանջել այդ տեսակ մի հարուստից, նա կարծում է որ այդ ներկայացումը նման է այն բոլոր սիրողներին ներկայակացուցանելին, որոնք շատ անգամ տրվում են մեզանում այս ինչ, այն ինչ մարդու համար փոքր ինչ փող հաւաքելու: Մի տղէտ, հարուստ հայից չէ կարելի պահանջել, որ նա այնքան զեղարուեստական զարգացում և ճաշակ ունենայ, որ հասկանայ թէ Մոյսիսեանի ձայնը ոչ թէ միայն մեղանում, բայց և ամեն երկրում ճիւղազրու և նշանաւոր ձայն կը համարվէր և ամեն երկրում կաշխատէին այդ տեսակ գանձ ունեցող չքաւոր երկասարդին օգնել իր ուսումը շարունակելու:

Մեզ գրում են Ա.Ս.Ա.Յ.Ս.Յ.Յ. Էջմիածնապատկան կառուածները Ախալցխայում գտնվում են շատ աննախանձելի գրութեան մէջ, որովհետեւ Էջմիածնը խարվում է, նշանակելով վաշխառու կառավարիչներ իր կալուածները վրա: Մինչպէս գիւղի անտառը թերեւս նախկին վաշխառուի ձեռքում է: Նա ամբողջապատկան պարտէզների կախիլ, (ընկուզենու) ծառերը կտրում և վաճառում է առանց Էջմիածնի գիտութեան:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Յովհաննէս Նաղարհանցի Հայոց լեզուի ուսուցիչ շախատարութեան չորրորդ տարուայ դասագիրքը: Գիրքը ունի ի հարկէ իր արժանատիութիւնները, բայց մի և նոյն ժամանակ խորհուրդ կը տայինք այդ տեսակ գրքեր կազմողներին աւելի ինքնուրոյն կերպով կազմել և ոչ թէ հետեւել սարկաւար մի որ և է ուսու դասագրքին: Օրինակ հեղինակը պատմում է թէ ինչ է արդիւնաբերում բնութիւնը օգոստոս ամսին և ասում է հետեւելու, այսպիսով մուտքեցնելով մանուկների հասկացողութիւնը: Օգոստոս ամիսը պողոտայում ամիս է և գեղեցիկ խնձորներով ու տանձերով է զարդարվում: Առաջ բերում է մեզ ծիրան, յետոյ

տեսակ տեսակ անուշամբ դեղձեր, վերջը կամայ կամայ գալիս են սեխն ու ձմերուկը, վառուկն ու լոբին, զգուցի և սոցա նման զովարար բոյսեր: (Երես 72): Ուրեմն ամիսը դարձար վ. ու մ է գեղեցիկ խնձորներով ու տանձերով, իսկ ազեղ խնձորներով ու տանձերով երբ է զարդարվում: Բացի սորանից վառուկը, խիարը միթէ օգոստոսին է գալիս, ընդհակառակն օգոստոսին վերջանում է, իսկ մայիսին է լինում արդէն: Եւ հեղինակի կարծիքով զգուցի, լոբին պտուղներ են և այն էլ զովարար: Ի՞նչ կը նշանակի այդ տեսակ դասագրքեր գրել, թարգմանելով նրանց ստիկաբար օտար դասագրքերից առանց սեփական ուղեղով մտածելու:

Մայրաքաղաքի լրագրիչները հազարում են որ շուտով կը վերցնվի Ս. Պետրբուրգում եղած կովկասեան կովտետը, աչքը առաջ ունենելով այն վերանորոգութիւնները, որոնք պէտք է կատարվեն կովկասեան փոխարքայութեան մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՊԱԿԱՆ ԻՆՎՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Եւրօպական հասարակական կարծիքը գրաւող իրանգական, ճունիսի, հրէական և զաղթականութեան խնդիրներին աւելացաւ մի նորը, պապական խնդիրը: Թէպէտ այդ խնդիրը կատարելագուստ նոր չէ կարելի անուանել, որովհետեւ 20 տարի է, ինչ նա գոյութիւն ունի, սկսեալ այն օրից, երբ սկսվեցաւ խալիպայի միութեան գործը, բայց վերջին ժամանակներում նա չափազանց լարվեցաւ և ընդհանուր եւրօպական նշանակութիւն ստացաւ: Պապը նորից յայտնում է, որ նրա դրութիւնը անտանելի է, որ նա ստիպված է վատիկանի մէջ գերի մնալ և որ նա չէ համարձակվում երեւալ Հռօմի փողոցների վրա:

Լէօն XIII այդպիսի բովանդակութեան մի ձառ. արտասանեց հռօմէական կօնսիստօրիայի առաջ այն տխուր անկարգութիւններին աւելթով, որ պատահեցաւ հանգուցեալ պապ Պիոս IX մարմնի տեղափոխութեան ժամանակ: Հռօմէական եկեղեցու առաջնորդի կողմից դա մի նոր մեղադրանք էր իտալական կառավարութեան դէմ, որ լրացնում էր կարգիսալ Եսկօբիէի կողմից եւրօպական պետութիւններին դեռ առաջ ուղարկած գանգատը:

Օգոստոսի 7-ին Հռօմի մէջ նոր անցքեր պատահեցան, որոնք միջոց են տալիս պապական կառավարութեանը մասնացոյց լինել այն վտանգի վրա, որ սպառնում է կաթօլիկութեան պետին խալիպայի մայրաքաղաքի մէջ: Տիրապետելով Հռօմին, Վիկտորիանուէլ իտալական թագաւորի կառավարութիւնը ապահովեց պապական անկախութիւնը: Այդ օրէնքի մէջ ասված է. «պապին անձնաւորութիւնը սուրբ և անմաշխէլ է»: Այդ օրէնքով իտալական կառավարութիւնը կաթօլիկ աշխարհի առաջ պարտաւորվել է չը թողլ տալ ոչ մի բան, որ խանգարէր պապի ազատութիւնը իր պարտականութիւնները և կաթօլիկ եկեղեցու պէտքերը հոգալու ժամանակ, պարտաւորվել է եւրօպայի առաջ պաշտպանել պապի իրաւունքները, իբրև մի անկախ թագաւորի իրաւունքներ: Բայց այդ պարտականութիւնը յանձն առնող կառավարութեան աչքի առաջ մի քանի հարկ մարդիկ մի ժողով կազմեցին, որի ժամանակ թէ պապութիւնը և թէ նրա ներկայացուցիչները, որոնց թուում էր և Լէօն XIII պապը նախատինքների և անէճքների ներթարկեցան: Բացի այդ պապի չափից գուրս թշնամի այդ ժողովի առաջնորդները մի վճիռ կայացրին, որ պահանջում է կառավարութեան

նից անուշադիր թողնել պապի ապահովութեան մասին օրէնքը և անյապաղ դրաւել պապական պալատները, ուրիշ խօսքերով արտաքսել պապին Հռօմից:

Այդ վճիռը հետեւեալն է. «ի նկատի առնելով, որ պապութիւնը և իտալական միութիւնը պատմական և քաղաքական հասարակութիւն են կազմում, որ պապերը 35 անգամ հրաւիրել են օտարներին յարձակվել խալիպայի վրա, որ պապութիւնը վնասում է իտալական ազգի ինքնակալութեանը, որ Աստուածային իրաւունքը, որի վրա յենված է պապութիւնը, չէ համապատասխանում իտալական ժողովրդական իրաւունքներին, որ պապութիւնը իբրև կրօնական հիմնարկութիւն իր ռզով, սկզբունքներով և նպատակներով մերժում է մտքի ու խրդախի անկախութիւնը, հակառակ է ամեն մի նոր իրաւացի գաղափարին և կորչում է միջին դարերի խաւարի մէջ, որ ապահովութեան մասին օրէնքը, իբրև պապի բարձրագոյն հեղինակութեան հիմք, նորից յարուցանում է այդ խաւարը իր բոլոր հետեւանքներով, ի նկատի առնելով այս բոլորը, հռօմէական ժողովուրդը պահանջում է փոխել այդ օրէնքը և գրաւել առաջ ետալն և րի պալատները:»

Ճշմարիտ է, այդ վճիռը այնպիսի մարդիկ են կայացրել, որոնց հետ իտալական կառավարութիւնը համերաշխ չէ և դա համակրութեամբ ընդունվեցաւ եւրօպայի մէջ այնպիսի մարդիկանցից, ինչպէս Լուի Բըլան, Վիկտոր Հիւգօ, Ծերունի Գարիբալդի, որոնց կարծիքները պապականութեան մասին արդէն վաղուց յայտնի են, մինչև անգամ պօլիցիայի միջամտութեան շնորհիւ վճիռը չը կարողացվեցաւ, բայց այնու առկայիս պապը այդ ժողովից վերաւորված է: Պապական կառավարութեան համար այդ ժողովը մի գիւտ է, և այդ պատճառով թէ կղերական և թէ արմատական լրագրիչները շտապեցին հրատարակել թէ ժողովի մէջ արտասանած ձառքը և թէ վերջիշեալ վճիռը: Կառավարութիւնը կաշխատեց այդ լրագրիչները, որոնք նրա պրութիւնը դժուարացրին, սպաղրելով այն, ինչի ընթացքում թիւնը արգելված էր պօլիցիայից և այդպիսով հեռացրեց իրանից պատասխանատուութիւնը արմատական կուսակցութեան ռզեորութեան համար: Բայց պապական մինիստրները կարող են պնդել, որ իտալական կառավարութեանը առաջուց յայտնի էին այդ ժողովի նպատակները, իսկ նա հանգստութեամբ նայում էր ժողովի համար տեսնող պատրաստութիւններին և նրանց արգելքներ չէր դնում: Իտալական կառավարութիւնը կարող է ի հարկէ մատնացոյց լինել իտալական սահմանադրութեան վրա, որ ապահովում է ամեն տեսակ ժողովների իրաւունքը փակված տեղերում, բայց այդ ձեւակն արգարութիւնն էլ աւելի կը տայ պապին գանգատել իր դրութեան անապահովութեան վրա:

Լուր է տարածված, որ պապը, ի նկատի առնելով այդ հանգամանքները, մտադիր է թողնել յաւիտենական քաղաքը և տեղեփոխվել Մալա կղզին և անգլիական օրէնքների ապահովութեան տակ լինել: Եթէ պապը կատարէ իր այդ մտադրութիւնը, իտալական կառավարութեանը նա մեծ դժուարութիւններ կը պատճառէ և Հռօմն էլ կը կորցնի համաշխարհային մայրաքաղաքի նշանակութիւնը: Բացի այդ պապի տեղափոխվելը առաջ կը մղէ պապական խնդիրը, որ կը գրգռի ամբոխին և որ դժուարութիւններ կը պատճառէ ամբողջ եւրօպային:

ՎԱԻՆԵՐԱՑՈՒՄ ԱԶՈՒՆՆԵՐԻ

Հռօմէական ազգայնոց Պատրիարք-կաթօլիկոս Գերջ. Ազարեան սրբազանի ընտրութեան աւթիւ Հռօմմայ Ս. Պապը կարգինալաց ժողովին մէջ հետեւեալ յայտարարութիւնն ւրեր է:

«Հիմա, յարգելի եղբարք, խնդրութեամբ կը ծանուցանեմ ձեզ Հայոց Ալիկիոյ կաթօլիկոսին նորոգ ընտրութիւնը: Երբ այն ցաւալի հերձուածը վերջնաւալու վրայ էր, մեր յարգելի եղբայր Անթուան Հասուն, որուն հռօմէական ծիրանին տուինք իւր արժանեաց համար, Պատրիարքութենէ հրաժարեցաւ: Ուստի այնպէս կարգադրեցինք որ մեր յարգելի եղբայրները, Հայոց եպիսկոպոսուք սիւնհոդ կազմեն և նոր Պատրիարքի մ'ընտրութեան ձեռնարկին ուստի յուլիս 6-ին Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ սիւնհոդը գումարուելով, քուէից մեծամասնութեամբ Նիքոսիացի Պետրոս Ազարեան արքեպիսկոպոսը Պատրիարք ընտրեց որ և անուանեցաւ Պետրոս Ժ:»

«Հայ եպիսկոպոսները յուլիս 8 թւականաւ յատուկ գրութեամբ մը սոյն ընտրութեան վերաբերեալ տեղեկութիւնները հաղորդեցին մեզ: Առջա գիտնալով որ Պատրիարքական արժանաւորութիւնը իւր բոլոր ոյժն ու զօրութիւնը երանելի Պետրոսէն առաքելոց երիցաբունէն կընդունի, որ Աստուծոյ կողմանէ գառանց և այժմերու վերակացու կարգուելով, «ինքն միայն ունի երկնից արքայութեան բանալին», խնդրեցին մեզմէ սոյն ընտրութիւնը վաւերացնել առաքելական իշխանութեամբ մերով:

«Մի և նոյն խնդիրն եղաւ մեզ նորընտիր Ազարեան Պատրիարքէն ալ, որ յուլիս 8 թւականաւ գրութեամբ մը վերստին կը կրկնէր այն հաւատոյ գաւառութիւնը գոր և սիւնհոդին առաջ յայտարարած էր: Սոյն նամակաւ իւր յարգանաց և բարեկամութեան զգացումներն ալ յայտնած է առ առաքելական աթոռն և նորա իշխանութեան հաւատարիմ մնալ խոստացած է:

«Մենք հաստի կ'մք, յարգելի եղբարք, թէ նորընտիր Պատրիարքը որ իւր վարած բազմազան պաշտօններուն մէջ միշտ հաւատարմութիւն առ Հռօմէական եկեղեցին, միշտ փորձառութիւն և եկեղեցոյ միութեան անյղիկ պահպանութեան համար եռանդ ու նախանձ ցուցցած է, ամէն կարելի ջանք պիտի ընէ հոյններու փրկութեան և իւր մեծ պաշտօնին մէջ բարի հովուի մը պարտաւորութիւնները կատարելու և ժողովուրդը գոհ ընելու համար: Այս փտահոթութեամբ և Արևելեան գործոց փրօփախանտայի ժողովին կարծիքն առնելէ ետեւ, ըստ խնդրանաց Պատրիարքին և Հայ եպիսկոպոսաց որոշեցինք սոյն ընտրութիւնը հաստատել և Պետրոս Ազարեանը Հայոց Ալիկիոյ Պատրիարք հռչակել:

«Ուստի իշխանութեամբ Ամենակարողին Աստուծոյ, սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի և մերով իշխանութեամբ կը հաստատենք Հայ եպիսկոպոսաց՝ մեր յարգելի եղբարք կատարած սոյն ընտրութիւնը յանձնի Պետրոս Ազարեանի գոր Նիքոսիոյ եկեղեցոյ պաշտօնէն բաժնելով, Հայոց Ալիկիոյ կաթօլիկոսական պաշտօնին կը բարձրացնեմք, զայն մի և նոյն եկեղեցոյ հովիւ և Պատրիարք կարգելով: Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ:»

(Հայրենիք)

ՄԻՆՑԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«Մասիս» լրագրի մէջ ևս տպվեց Միացեալ ընկերութեան նախկին Տնօրէն Ժո



# Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Մ Ա Ռ Ք Ա Թ Ի Պ Ա Յ Ի

Բոլոր բանաստեղծութիւնների ժողովածուն, ապա՛ծ Մօսկվայում ամենաընտիր թղթի վերայ, հեղինակի վիճակը պատկերով, զինքը 50 կ. վաճառվում է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՆՈՑՈՒՄ:

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

- 1) Ռոբինզոն-Կառուցո՝ Աղանեան " 60 կ.
- 2) Ահմէդի տոպրակը՝ Լալայեան " 10 "
- 3) Ծագկաբաղ արձ. և չափ. բանից՝ Կոստանեան " 25 "
- 4) Ուսուցիչ հայոց լեզուի՝ Նազարեան " 40 "

Վերջին երկու գրասագրքերից գուժարով գնողները նշանաւոր գրքումն են ստանում:

144 Արժուճու գալէրէս 144 ամենաէժան պահեստ մերէլի և հայելիների:

## ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ

ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ ВЪ НАЙМЫ

Въ галлерей имѣются: вода, газовое освѣщеніе и телеграфная станція.

10—10

## ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՆՈՒՄ

ՎԱՐՁՈՎ ՏԵՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐ

Գալլերէում կայ ջուր, գազի լուսաւորութիւն և հեռագրական կայարան:

10—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ԳԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կօնֆետներ, ԿԱԿԱՍ, բրինձ, ԱՄԱՆԵՂԵՆ, բոխիներ, թասեր, երես լուսնալու ամաններ, չայիկներ, բԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, գրաշներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ, այբուճներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսրիչներ, կիժուկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՑԵՆ, խերես, կօնեակ և այլն: Թէ՛ք մե՛ծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԳՐ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ԵՐԲԵՏ մազնեգիա, խմոր ԾԱՐԱԻ ԴԷՄ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէ՛մ, կարթուան ֆՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ վատերկրօգտի համար, պարսկական փոշի:

50—100

Հրատարակութեամբ Ներսիս Միլեճեանց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Նրէբերի «Տնային բժշկական մարմնամարզութեան» գրքը՝ հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմաթիւ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց դործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կօպ. ծախվում է «Կենտրոնական և Կովկասեան գրա-վաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանանցի մօտ.» Тройцкій пер. типография Вартамянца, въ Тифлисѣ.

## Ա Ր Գ Է Ն Ծ ա խ վ ու մ է

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ» Անունով մեր ԶՈՐՐՈՐԳ տարուայ դասագիրքը կենտրոնական և Կովկասեան գրա-վաճառանոցներում:

Գինն է 60 կօպէկ  
Գուժարով առողջներին զիջումն կը լինի: Իսկ ով ցանկանում է հատը 55 կօպէկով ձեռք բերել, զինքը ԿԱՆԻԻԿ վճարելով թող զիմէ մեզ հետեալ հասցէով. Вѣ Тифлисѣ.—На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцѣ.

Յ. Նազարեանց 2—25

## Въ Редаціи газеты «МШАКЪ»

Продается «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.» Д. Григорія АРЦРУНИ. Брошюра напечатана въ Москвѣ. Цѣна 25 коп.

## Մ. ՎԱՐԳԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխեցաւ Գանօփակայա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՕՅԻՑ փողոցը № 11. փօստատան ետեի քուչանը ընդունվում են ամեն լիզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամաշելի գներով:  
Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրա:

## «Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՁԻՆ ՌՈՒՍ-ՌՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ ԲԱՅՅԻԻ  
Տպագծ մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրա-վաճառանոցում» և Կովկասեան գրա-վաճառանոցում՝ պ. Չաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Նահիբեանցի, Բօզար-Չեանցի, Հովուեանցի ծխախոտի մագալիններում:  
Գինն է 1 րուբլ 20 կօպ.:

## ԵՂԱՐԲ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՕՎՆԵՐԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ո Ւ Մ

Գրանեակը Կո. գնէցի կամըջի վրա, Կ. Ս. Պօպովի տանը:  
Պատու ունիւք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր Ֆրիմայի ԹԷՅԻ առեւտրի համար բաց արինք նորերումն նոր խանութներ և հետեալ քաղաքներում:  
**ԽԱՐԿՈՎ ՈՒՄ**—Պետրովսկի փողոցի վրա, սեփհական տանի  
**ԹԻՖԼԻՉՈՒՄ**—Գոյովիսկի պրօսպեկտի վրա, Միրիմանեան: տան:  
**ՄԷՎԱՍՏՕՊՈԼՈՒՄ**—Բոյշոյ-Մօրսկոյ փողոցի վրա, Կօզէն վաճառականի տանը:  
Ինչպէս այս, նոյնպէս և առջուայ խանութները Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ և ԿԻԷՎՈՒՄ—թէ՛յն որ առած է ֆունտների, կէս ֆունտների և քաւորդ ֆունտների, ուղարկվում է մեր պլաւար պահեստի խանութից, որ գտնվում է Մօսկվայում, Կրասնօսէլսկի փողոցի վրա, սեփհական տան: 6—30

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադառնող: Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԿՂ, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը վրձին գլխա-յաւի դէ՛մ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 14—100

## Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Պ Ա Ր Տ Է Չ

### Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

Ընդունելութիւնները սկսվում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից: Մանկական պարտէզի՝ մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ «Տարրական ուսումնարանում» մինչև 13 տարեկանները:  
Իշխան Ն. Ամատունու տուն, Վելիամիրովսկի փողոցի վերայ:  
Բ. Միրիմանեանց

Մամուլի տակն է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանգինեանի հետեալ աշխատութիւնը. «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՆՈՑՈՒՄ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ»՝ ծխական դպրոցների 4-ր տարվայ դասընթացը, և միանգամայն 1-ն, 2-ր և 3. տարիների համար հրատարակուի:

ПРИСЯЖНЫЙ ПОВѢРЕННЫЙ  
**А. С. ФРЕНКЕЛЬ**  
Переѣхалъ на Сололакскую ули-цу, въ домъ К. Меликова.

ՄԻ ՊԱՏՈՒԱԻՈՐ ԸՆՏԱՆԻՔ  
ցանկանում է ընդունել իր մօտ օտարաբա-ղաբացի և թիֆլիսցի ԵՐԵՒԱՆԵՐԻՆ, որոնք սովորում են ուսումնարան-ների մէջ: Կարելի է ԴԱՍԵՐԸ կրկնել սալ և առանց կրկնութեան: ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ շատ չափաւոր է: Հասցէն. Կենտրոնական գրա-վաճառանոցի մէջ:  
2—3 (4)

ԵՐԳՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ԶԵՄԵՍՕՎ տեղափոխեց իր բնակարանը Արեւ-նայնայա փողոց «Կրօտօկի» շինութեան ետեւը, Գարբուճօղի տանը: 3—5 (1)

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէ՛յ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖ-ԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիա-կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէ՛յի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական խանութը կը աւանդէ ՄԱՔՈՒՐ թէ՛յ առանց թՂԹԻ և ԱՐՃՃԻ:  
35—100

ՄՕԾԱԿՆԵՐ կոտորելու փոշի: Ծախվում է ԾԱՏՈՒՐՕՎԻ լաւ պի մագալինում:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԳ ՏԱՐՈՒԱՅ գրասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական գրա-վաճառանոցներում:  
Գինն է 40 կօպէկ:  
Իսկ ով ցանկանում է հատը 35 կօպէկով ձեռք բերել, զինքը ԿԱՆԻԻԿ վճարելով և ճանապարհ հաճախսը իր վրա առնելով՝  
Թող զիմէ մեզ հետեալ հասցէով. «Вѣ Тифлисѣ.— На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцѣ.»

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., ՏՐՃՈՂՆԵՐ 1 ր., Ճալիղ աթուռներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒ 4 ր., ԲԱԶԱԹՈՒ-ՄԱՀԱԿԱԼ 10 րուբլ և աւելի, թէ՛յի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պատեալ ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:  
10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԲԱՆԵՐ 30 կ.— 1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմադէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պարուսին 40 կ.—1 ր., 300 հատ ըէֆօլիեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍՏՎԵՆՈՎ, 10,000 Ֆունտ թէ՛յ ԹԵՅՄԱՄԱՆՈՎ, 1 ր. 65 կ.: երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ:  
32—100